# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 8
,, 7,, փետրվարի 2016թ.

1134, Արմավիրի մարզ, գյուղ Ծիածան,098 00 77 37
e- mail tsiatsan.armavir@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյանին

Ներկայացնում ենք, Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 1 հերթական նիստի որոշումները;

Առդիր <<35>> թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.65/2019-17
«08» 02 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1134,Արմավիրի մարզ գ.Ծիածան,
E-mail tsiatsan.armavir@mta,gov.am

,, 06 ,, փետրվարի 2017 թ

Թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասի հինգերորդ կետով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Ա. ՄԵԼԻՔՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 2. Ա.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 3.Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 4.Ա.ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ.

2017 թվականի փետրվարի 6
գ. Ծիածան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածան համայնքի
ավագանու 2017 թվականի փետրվարի 6-ի
թիվ 1 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6 - Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ,, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N24- Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱԶԱՏԸ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

6. <<ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎՏՈԴՊՐՈՑ>> ՍՊԸ -ՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

7. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

---

1134,Արմավիրի մարզ գ.Ծիածան,
E-mail tsiatsan.armavir@mta,gov.am

,, 06 ,, փետրվարի 2017 թ

Թիվ 2-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով, համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի 2017 -2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի;

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը ;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Ա. ՄԵԼԻՔՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 2. Ա.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 3.Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| 4.Ա.ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ.

2017 թվականի փետրվարի 6
գ. Ծիածան

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածան
համայնքի ավագանու 2017 թվականի
թիվ 2-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017- 2021թթ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Կազմել է համայնքի ղեկավար՝ Վաչիկ Գրիգորյանը**

**Հաստատվել է համայնքի ավագանու 1 թիվ 2 -Ն որոշմամբ**

**ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔ- 2017 թ**

## Ներածություն

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ (այսուհետ՝ ՀՀԶԾ), այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ;

Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը;

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները;

Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ;

# 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի բնակիչներին, համայնքի ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին;

Ծիածան համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում, մշակույթի տանը, բուժկետում, փոստային բաժանմունքում, առևտրի սպասարկման օբյեկտներում;

Համայնքում 2017-2021 թթ նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են մանկապարտեզի շենքի կառուցում, համայնքի 5-րդ փողոցի գազաֆիկացում, փողոցներում գիշերային լուսավորության անցկացում, ֆուտբոլի դաշտի բարեկարգում, խմելու և ոռոգման ջրերի ներքին ցանցի նորոգում, գյուղամիջյան փողոցների բարեկարգում և դաշտամիջյան ճանապարհների փոսալցում;

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը; Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, որովհետև մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը;

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում համայնքի ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի, դպրոցի, մշակույթի տան, բուժկետի , փոստային բաժանմունքի աշխատակիցները և անհատ քաղաքացիները;

Բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով;

Շնորհակալություն;

Համայնքի ղեկավար Վաչիկ Գրիգորյան

## 1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արմավիրի մարզի Ծիածան / նախկին Գրամփա/ գյուղի վարչական տարածքը կազմում է 309 հա, գտնվում է ծովի մակերևույթից 890մ բարձրության վրա, Արարատյան դաշտավայրում, Քասախ գետի ափին, մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա;

Գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից է՝ պատմական անցյալը կապված է կիկլոպյան դարաշրջանի հետ; Գյուղի տարածքում եղել է կիկլոպյան ամրոց,որը զբաղեցրել է 8 հա տարածք; Մինչև օրս պահպանվում են պատմական անցյալի հիմքերը. ամրոցի բազալտյա քարերը;

Կատարվել են պեղումներ, որի ընթացքում հայտնաբերվել են մի շարք ստորգետնյա շենքեր, խեցեղեն զարդեր,մետաղյա իրեր; Քասախ գետի հունի մոտ գտել են սև գույնի կարաս,որն ունի 4000 տարվա պատմություն;

Գյուղը հնում Մեծամորի ձուլարանին կավ է մատակարարել;

- Հին պատմական աղբյուրներից տեղեկություններ կան, որ Ալեքսանդր Մակեդոնացու մի զորավար՝ Գրամփի անունով պատերազմել է այս տարածքում և հաղթել, որի անունով էլ կոչվել է գյուղը՝ Գրամփա, իսկ 1967թվականից՝ Ծիածան;

Գյուղը գազաֆիկացված է, կա հեռախոսային կապ, շուրջօրյա խմելու ջրով ապահովված են բոլոր բնակարանները;

. Համայնքը ունի մշակույթի տուն, գրադարան, եռհարկ դպրոց՝սպորտ դահլիճով, բուժկետ, փոստային բաժանմունք;

Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ;

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են դաշտային և ջերմոցային մշակաբույսերի աճեցմամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ;

### 1.2 Ժողովրդագրություն

Ծիածան համայնքի բնակչության թիվը կազմում է 1390 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 60 տոկոսը;

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն՝

1. երեխաներ / 0-6 տ / - 95

2. դպրոցականներ /7-17/ - 247

3.16- 18 տարեկան - 35

4. թոշակառուներ – 165

5. հաշմանդամներ- 65

6. աշխատունակ - 870

7. փախստականներ – 10

8. գործազուրկներ --56

9. ընտանիքների / ծխերի թիվը/–235

10.ընտրողների թիվը -914

11.հայրենական պատերազմի մասնակիցներ – 0

12.ազատամարտիկներ- -16

13.զոհված ազատամարտիկներ –2

14.միակողմանի ծնողազուրկ երեխաներ- 4

## Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 25480 քմ; Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի ավելանում է; Բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամաս, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ;

## Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 309 հա՝ որից
Վարելահող – 168,4հա
Բազմամյա տնկարկ - 9,0հա
Տնամերձ հողեր – 39,0
Դպրոց, դպրոցամերձ հողեր- 2,10
Փողոցներ բակեր - 7,81հա
Դաշտամիջյան ճանապարհներ-19,04հա
Գերեզմանոց – 1,63հա
Ոռոգման ցանց- 5,18հա
Արտադրական մաս- 3,82հա

Կենցաղի տուն - 0,02 հա
Մանկապարտեզ- 0,09հա
Սպորտհրապարակ -0,70 հա
Ջրային հողեր - 16,4հա
Էներգետիկայի հողեր- 0,10հա
Այլ հողեր- 0,17հա
Հանր,նշանակության ճանապարհ - 1,91հա
Մարզային նշանակության ճանապարհ- 1,59հա
Սեփականաշնորհված հողեր -177,6հա
Մեկ հողաբաժնի չափը- 0,38 հա
Հողերի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը- 335

## 1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և ավագանի;

Համայնքի ղեկավարը / համայնքապետը/ համայնքի գործադիր կառավարման մարմին է և պաշտոնապես ներկայացնում է համայնքը, կարող է հանդես գալ համայնքի բնակչության անունից, կատարել ՀՀ Սահմանադրությամբ և ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքով նախատեսված լիազորություններ;

Ինչպես համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը նույնպես ընտրվում է անմիջականորեն, համայնքի բնակչության կողմից՝ փակ գաղտնի քվեարկության արդյունքում;

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընտրված ներկայացուցչական մարմին է, որն իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված, համայնքի շահերի պաշտպանությանն ուղղված լիազորություններ;

Համայնքի ղեկավարը իր լիազորությունները իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով, որն իրականացնում է համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության ֆինանսական, կազմակերպական և տեխնիկական սպասարկումը; Համայնքի ղեկավարի աշխատակազմի գործունեությունը կարգավորվում է վերջինիս կողմից հաստատված աշխատակազմի կանոնադրությամբ; Համայնքի ղեկավարի ներկայացմանբ, համայնքի ավագանին է որոշում, թե ինչ կառուցվածքային ստորաբաժանումներ պետք է ունենա համայնքի ղեկավարի աշխատակազմը;

Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է՝

համայնքի ղեկավարի տեղակալ – 1 դրույք
աշխատակազմի քարտուղար – 1 դրույք

առաջատար մասնագետ – 1 դրույք
առաջին կարգի մասնագետ - 1 դրույք
գործավար- օպերատոր – 1 դրույք
մշակույթի տան վարիչ – 1 դրույք
գրադարանավար – 1 դրույք
պահակ- 1 դրույք
հավաքարար – 1 դրույք

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած է 10 հոգուց;
Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամներից;

## 1.4 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքը ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով;
Համայնքի սեփականությունն է համարվում՝
Մշակույթի տուն
Դպրոց
Մանկապարտեզ
Կենցաղի տուն
Կաթսայատուն
ներհամայնքային ոռոգման ցանց

## 2. Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Համայնքը ունի հիանալի տիպային մշակույթի տուն, գրադարան,եռահարկ դպրոց՝ երկու մասնաշենքով, փոստ, բուժկետ;
Համայնքապետարանը չունի վարչական շենք, որի պատճառով զբաղեցնում է մշակույթի տան երկրորդ հարկը;
Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում՝ 1 փողոցի թիվ 42 հասցեում;
Մշակույթի տան շենքում են գտնվում նաև գրադարանը, բուժկետը և փոստը;
Վերանորոգված և կահավորված է մշակույթի տունը, բուժկետը, գրադարանը,իսկ գույքը նորացված և համալրված է համակարգչային տեխնիկայով;

Ծիածան գյուղը խորհրդային իշխանությունից ժառանգել է մեծ և հարմարավետ մշակույթի տուն, որը կառուցվել է 1966 թվականին; Բոլորին հայտնի է, թե ինչ դեր ունի նման հաստատության առկայությունը բնակչության մշակութային կյանքի կազմակերպման գործում;
2012-2014 թվականներին ,,Քուանթերփարթ ինթերնեշնլ,, կազմակերպության և համայնքի մասնակի ներդրման միջոցով կատարվել է մշակույթի տան տանիքի վերանորոգում, շենքի կապիտալ հիմնանորոգում և ներքին հարդարում, դահլիճի նորաոճ աթոռների ձեռք բերում, գրադարանի և գրապահոցի հիմնանորոգում և համալրում ժամանակակից գույքով և համակարգչային տեխնիկայով;
Մշակույթի տան խաղասենյակներում իրենց ազատ ժամանակն են անցկացնում համայնքի երեխաները և մեծահասակները;
,,Երեխաների անհոգ մանկության,, շրջանակում համայնքում կառուցվել է խաղահրապարակ, որտեղ տեղադրվել են մի քանի կարուսելներ, նստարաններ և երեխաների հանգստի համար ստեղծվել են բավարար պայմաններ;
Մսուր- մանկապարտեզի շենքը կառուցվել է 1948 թվականին՝ եռպատերազմյան շրջանում և մինչև օրս շենքի վրա ոչ մի կապիտալ վերանորոգման աշխատանքներ չի կատարվել, որի հետևանքով շենքը դարձել է վթարային և վտանգավոր է երեխաների համար;Շարքից դուրս է եկել տանիքի ծածկը, որը հողային ծածկույթ է, քայքայվել են պատերը և առաստաղը և շենքը դարձել է ամբողջովին վթարային;Համայնքի շատ երեխաներ հաճախում են Էջմիածին քաղաքում գործող մանկապարտեզներ;
Համայնքն ունի ամբողջովին վերանորոգված եռահարկ միջնակարգ դպրոց, ուր հաճախում են 285 երեխաներ,ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 30 հոգուց;
Համայնքում զբոսաշրջություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան;
Համայնքային փողոցները ասֆալտապատ չեն և գտնվում են ոչ բարվոք վիճակում;Համայնքի կենտրոնական փողոցը, որը գյուղը կապում է միջհամայնքային ճանապարհի հետ, մինչև տնտեսական անկումը եղել է ասֆալտապատ վիճակում, իսկ հետագայում համապատասխան միջոցներ չլինելու պատճառով սկսել է տեղ- տեղ քայքայվել՝ առաջացնելով փոսեր, անհնար են դարձնում մարդկանց և ավտոմեքենաների երթևեկությանը;
Ճանապարհային ցանցը վերանորոգման խիստ կարիք ունի;
Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 5 կմ գյուղամիջյան ճանապարհներ և փողոցներ;
Խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը կազմում է 30-40 տոկոս;Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ թափանցում են խմելու ջրի ցանց,որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը;

## 2.1 Գյուղատնտեսություն

Համայնքի բնակչության 95 տոկոսը զբաղվում է գյուղ,մթերքների արտադրությամբ՝ հիմնականում կարտոֆիլի և բանջարա-բոստանային կուլտուրաների մշակությամբ;Որոշ մենատնտեսներ զբաղվում են խաղողագործությամբ,այգեգործությամբ և

անասնապահությամբ; Բնակիչների եկամուտի հիմնական աղբյուրը հողագործությունից ստացված եկամուտներն են, թոշակները, նպաստները, որի համակարգից շատ ընտանիքներ դուրս են մնացել;
Այս հիմնախնդրի հաղթահարման ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է, քանզի համայնքն ունի մեծ աշխատուժ՝ մտավոր և ֆիզիկական զգալի պոտենցյալ, որն էլ հույս է ներշնչում լավատեսորեն նայելու վաղվա օրվան;

## 2.2 Կրթություն

Գյուղն ունի կապիտալ վերանորոգված եռհարկանի միջնակարգ դպրոց, որը գտնվում է գյուղ մտնող ճանապարհի վրա;
Կառուցվել է 1967թ, ուր հաճախում են նաև հարակից՝ Ծաղկունք գյուղի երեխաները;
2004թ ՀՀ սոց. հիմնադրամի միջոցներով և համայնքի 10 տոկոս համաֆինանսավորմամբ ամբողջովին հիմնանորոգվել է դպրոցի առաջին մասնաշենքը, վերանորոգվել է սան հանգույցները, կատարվել է պատերի ամրացում, շենքի շրջապատի մայթերի ասֆալտապատում;
2012 թվականին պետ.բյուջեի ներդրումներով ավարտվեց դպրոցի երկրորդ մասնաշենքի արտաքին տեսքի վերանորոգման և արդիականացման աշխատանքները, ամբողջովին փոխվեց տանիքը,անցկացվեց ամբողջ դպրոցի լոկալ ջեռուցումը;
Գյուղն ունի մանկապարտեզ, որը կառուցվել է 1948թվականին, մեկ հարկանի է, 350 քմ մակերեսով և ոչ մի անգամ չի վերանորոգվել;
2001 թվականից մանկապարտեզը չի գործում՝ շենքի վթարային վիճակի և ֆինանսավորում չլինելու պատճառով; Դպրոցի երկրորդ մասնաշենքում բացվել է նախակրթարանի երկրորդ խումբ,որի ուսուցչուհու աշխատավարձը վճարելու համար համայնքը տալիս է դրամաշնորհ;
Սակայն այս ծրագրի իրագործումը չի նվազեցնում համայնքում մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտությունը;

## 2.3 Մշակույթ և սպորտ

Համայնքում կա մշակույթի տուն, որը կառուցվել է 1966 թվականին, երկհարկանի է, 432 քմ մակերեսով; Առաջին հարկում են գտնվում խաղասենյակները, դահլիճը, բուժկետը, փոստը , իսկ երկրորդ հարկում՝ համայնքապետարանը, գրադարանը և գրապահոցը;
2012 թվականին ,,Քաունթերփարթ ինթերնեշնլ,, կազմակերպության և համայնքի մասնակի ներդրման միջոցով ամբողջովին վերանորոգվեց գրադարանը, գրապահոցը և համալրվեց գույքով և ժամանակակից համակարգչային տեխնիկայով; Գործող գրադարանում առկա է 5800 կտոր գիրք;
Որպես պատվիրակված լիազորություն՝ համայնքում կազմակերպվում են ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ;

Համայնքն ունի նաև սպորտ հրապարակ՝ 0,70 հա տարածքով, որտեղ հաճախակի կազմակերպվում են սպորտային խաղեր, ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկեթբոլի համայնքային կամ միջհամայնքային առաջնություններ;

## 2.4 Առողջապահություն

Գյուղն ունի մեկ բուժկետ՝ 2 աշխատողով, գտնվում է մշակույթի տան շենքում՝ 25 քմ տարածքով; ,,Սեյվ դը Չիլդրեն,, կազմակերպության և համայնքի մասնակի ներդրման միջոցներով ամբողջովին վերանորոգվեց և կահավորվեց համապատասխան գույքով և առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով;

## 2.5 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2017թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ / հազ.դրամ/

Եկամուտներ՝

1. Հողի հարկ -4,241,0
2. գույքահարկ/շենք,շին/ - 413,5
3. գույքահարկ/ավտոմեքենա/ - 2,200,0
4. տեղական տուրքեր – 150,0
5. դոտացիա – 20,573,3
6. վարձակալ,հողի հարկ – 88,5
7. պահուստային ֆոնդ - 580,0

Ընդամենը եկամուտներ – 27.666.3 հազ.դրամ

Ծախսեր՝

1. աշխատակազմի աշխատավարձ- 12.124.0
2. խրախուսանք – 858,0
3. էլեկտրաէներգիա – 1,500,0
4. կապ,հեռ, ինտերնետ – 264,0
5. տեղեկատվական թերթ- 100,0
6. գույքի և սարքավ,վարձակ- 990,0
7. տրանսպորտային նյութեր – 400,0
8. ներկայաց,ծախսեր /պսակներ/ 200,0
9. համակարգչային ծառայություն- 228,8
10. գրասենյակային նյութեր – 400,0
11. հատուկ նպատակ,նյութեր- 200,0
12. -վարչական սարքավորում- 500,0

13. դրամաշնորհ-   858,0
14. ընթացիկ նորոգում և պահպ – 1,600,0
15.մասնագիտ,ծառայություն-   200,0
16. համայնքային ասոցացիա -  13,5
17. աղբաթափություն -   996,0
18.խմելու ջրի ջրամատակարարում- 120,0
19. գրադարաններ – 80,0
20. մ/տ աշխատ. աշխատավարձ- 3,328,0
21.խրախուսանք –  256,0
22.ընդհանուր բնույթի հանր.ծառ – 500,0
23. սոց. օգնություն – 1,000,0
24.նվիրատվութ. այլ կազմակերպ – 150,0
25. պահուստային ֆոնդ - 580,0
Ընդամենը ծախսեր 27.666.3 հազ.դրամ

## 2,6 Համայնքում իրականացվող ծրագրեր

Ծիածան համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող / շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն;
Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող / շարունակվող/ միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ;
Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող /շարունակվող/ ծրագրեր և միջոցառումներ;
Չեն նախատեսվում նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր;
Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող /շարունակվող/ ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ;
Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար;

## 2,7 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017- 2021 թթ սոցիալ- տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր;

| հ/հ | Ծրագրի,միջոցառման աշխատանքի անվանումը | Ընդհ գումար /միլիոն/ | Ֆինանսավորման աղբյուրները | Կատարման ժամկետները | | | | | պատասխանատու |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017թ | 2018թ | 2019թ | 2020թ | 2021թ | |
| 1 | Պոլիէթիլենային թաղանթի արտադրամասի կառուցում | 60 | դոնոր կազմակեր | - | 10 | 20 | 20 | 10 | Համ,ղե |
| 2 | Մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգում | 20 | դոնոր կազմակեր | | 10 | | | 10 | Համ, ղ |
| 3 | Մեկ արտեզյան հորի հորատում | 15 | սոց,ներդրումների հիմնադրամ | 5 | | 10 | | | Համ,ղե |
| 4 | 1,5կմ երկարությամբ կենտրոնական փողոցի ասֆալտապատում | 30 | սոց ներդրումների հիմնադրամ | | 10 | | 10 | 10 | Համ,ղե |
| 5 | Սպորտ հրապարակի կանաչապատում և գույքի ձեռք բերում | 5 | դոնոր կազմակեր | 2,5 | | 2,5 | | | Համ ղե |
| 6 | փողոցներում գիշերային լուսավորության անցկացում | 10 | դոնոր կազմակեր | | 5 | | | 5 | Համ,ղե |
| 7 | գյուղամիջյան և դաշտա-միջյան ճանապարհների բարեկարգում | 1 | համայնքի բյուջե | 1 | | | | | Համ,ղե |

## 2,8 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ծիածան համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման համար խոչընդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից;

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչընդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեն խմբակներ, ակումբներ, կկազմակերպվեն տոների և հիշատակի օրերին նվիրված ավելի շատ միջոցառումներ;

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացը,ավելի նպատակային կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցառումներ,որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար;

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար եղած սպորտային՝ ֆուտբոլի, կարատեի պարապմունքներից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել՝ կազմակերպել վոլեյբոլի, վազքի, բռնցքի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, սպարտակիադներ;

Համայնքներում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչները, ովքեր ունեն տնամերձ հողամասեր՝ցանկանում են կառուցել բնակելի տներ,փաստաթղթերի ձեռք բերումը, որը վերաբերվում է տարբեր հիմնարկություններից ստացվող թույլտվություններին՝ դարձնել էլ ավելի դյուրին և հասանելի;

Համայնքի հինգերորդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների ավարտին հասցնելը;

Ոռոգման ջրատարի ներհամայնքային հանակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են,մյուս մասը հողային հունով, որի պատճառով ունենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ;

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման գործում;

## 2,9 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների / ՈՒԹՀՍ/ վերլուծություն

Ուժեղ կողմեր

1. Համայնքի աշխարհագրական դիրքը / բնակլիմայական պայմանները/
2.Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարում
3.Համայնքն ունի ԲՈՒՀ-երի շատ ուսանողներ,որոնք տարբեր մասնագիտությունների գծով ապագայում կարող են կազմակերպել համայնքի կրթության, մշակույթի, շինարարական և այլ աշխատանքներ;
4. Գյուղում գործում են առևտրի օբյեկտներ

2. Թույլ կողմեր
1. Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն
2.Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում
3.Չի գործում մանկապարտեզը, չկան զբոսայգիներ;
4.Կիսակառույց բնակարանների ավարտման հնարավորություններ չկան;
5.Տարեցտարի ավելանում են արտագնա աշխատանքի մեկնողների թիվը;
6,. Գյուղը չունի եկեղեցի;

3. Հնարավորություններ
1.Պոլիէթիլենային թաղանթների արտադրության կառուցում
2.Ջերմոցային տնտեսության զարգացում

4. Սպառնալիքներ
1.Բնակլիմայական պայմանները
2.կարկտահարությունը
3. Բնակչության արտագաղթը
4.Գարնան հեղեղումներից Քասախ գետի վարարումը

## 3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Ծիածան համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում՝ համայնքը անհատ ներդրողների հետ համագործակցությամբ կզարգացվեն պոլիէթիլենային թաղանթների արտադրություն;Նշված աշխատանքների կատարման համար կներդրվի վրա 60 միլիոն ՀՀ դրամ և արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր;Համայնքը կսկսի կայուն զարգանալ, յուրաքանչյուր աշխատող կստանա 150 000 ՀՀ դրամ աշխատավարձ,կավելանա բնակչի իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը;
2, Գյուղի կենտրոնական և մյուս փողոցների գիշերային լուսավորության անցկացում, ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման փոսալցման, ասֆալտապատման, 5-րդ փողոցի գազաֆիկացման, խմելու ջրի ներքին ցանցի մասնակի նորոգման, սպորտ հրապարակի կանաչապատում և գույքի ձեռք բերում , ներհամայնքային ոռոգման ջրատարի նորոգման համար ;
Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10 տոկոսի աճ, իսկ ոռոգման համայնքի վերանորոգման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 20 տոկոսով;

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«1,5 կմ երկարությամբ կենտրոնական փողոցի ասֆալտապատում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Կենտրոնական փողոցի ասֆալտապատում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td>10000000</td><td></td><td>10000000</td><td>10000000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td>5000000</td><td></td><td>5000000</td><td>5000000</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td>5000000</td><td></td><td>5000000</td><td>5000000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Ձյութի,մանրախճի,ավազի ձեռք բերում<br>1.2.տեխնիկայի վարձակալում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.ասֆալտի փռում<br>2.2.ասֆալտի հարդարում, ամրացում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝30000000<br>Ընդհանուր բյուջեն՝ 30000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշխատուժ,նյութեր և տեխնիկա</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">ասֆալտապատում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018-2021թթ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Կբարելավի բնակչության կոմունալ-կենցաղային խնդիրները և ավտոմեքենաների տեղաշարժը</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« պոլիէթիլենային թաղանթների արտադրամասի կառուցում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Պոլիէթիլենային թաղանթների արտադրամաս</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>10000000</td><td>20000000</td><td>20000000</td><td>10000000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>5000000</td><td>10000000</td><td>10000000</td><td>5000000</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td>5000000</td><td>10000000</td><td>10000000</td><td>5000000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.նորագույն տեխնոլոգիայի սարքավորումների ձեռք բերում<br>1.2.հումքի ձեռք բերում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.տարածքի բարեկարգում<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Դոնոր կազմակերպութ՝ 60000000<br>Կապիտալ ծախսեր՝ -<br>Ընդհանուր բյուջեն՝ - 60000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Հումք, նորագույն սարքավորումներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակչությունը</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018-2021թթ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Կխթանի ջերմոցային տնտեսությունների զարգացմանը, որը կհանդիսանա բնակչության կայուն եկամտի աղբյուր, կստեղծվի 15 աշխատատեղ;</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« մանկապարտեզի շենքի հիմնանորոգում »
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Մանկապարտեզի շենք | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | 10000000 | | | 10000000 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | | |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.մանկապարտեզի շենքի կապիտալ հիմնանորոգում<br>1.2. տարածքի կանաչապատում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. գույքի և սարքավորումների ձեռք բերում<br>2.2.դոնոր կազմակերպությունների ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Դոնոր կազմակերպութ՝ - 15000000<br>Կապիտալ ծախսեր՝ 5000000<br>Ընդհանուր բյուջեն՝ 20000000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, նյութեր և տեխնիկա | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Երեխաների անհոգ մանկության ապահովում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 – 2021թթ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Բնակչությունը կունենա ավելի շատ ժամանակ՝ զբաղվելու իրենց աշխատանքով, կբարձրանա երեխաների դաստիարակչական և խնամքի մակարդակը; | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« փողոցներում գիշերային լուսավորության անցկացում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գիշերային լուսավորության անցկացում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>500000</td><td>-</td><td>-</td><td>5000000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
